**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

**«ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ**

ք.Գավառ «25» հունիսի 2024թ.
**ժամը 16:00**

**Մասնակցում էին**
**Հանձնաժողովի գնահատող անդամներ՝** Գ.Բոշյան /նախագահ/, Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,
**Բացող անդամներ՝** Ա. Կատվալյան, Գ.Աղլամազյան,
**Քարտուղար՝** Ս.Մելքոնյան,

**«ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/9» ծածկագրով գնանշման հարցման ձեվով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի**
**Գ.Բոշյան**

«Գնումների համակարգող /քարտուղար/ Սյուզաննա Մելքոնյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 3 /երեք/ մասնակից՝

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն, էլ. հասցե |
|---|---|---|
| 1 | «ԱԼՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ կոնսորցիում | Ք.Հրազդան, Հացագործների փ. 2շ. բն. 3<br>simonyanna93@mail.ru<br>ք. Աբովյան, Գառնի 7/1<br>simonyanna93@mail.ru |
| 2 | «ՖԱՎՈՐԻՏ-Մ» ՍՊԸ | Գ.Կարմիրգյուղ, Պ.Սևակի 35<br>rudik-1989@mail.ru |
| 3 | «ԳԵՏ-ՇԻՆ» ՍՊԸ | ՀՀ Գեղարքունիքի մարզ Վ. Գետաշեն Ա թղմ. 5-րդ փողոց տ 2<br>getshin98@mail.ru |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

**1)** Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/9 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

**1.1)** **«ԱԼՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ** կոնսորցիումի ներկայացրած հայտը չի համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

- Ներկայացրած հայտի հավելված N1-ում /գնանշման հարցման ընթացակարգի դիմում-հայտարարություն/ «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի իրական շահառուների կայքիղումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները,
- Կողմերի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի համաձայն Գործընկեր 2-ը՝ «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն ապահովում է շինարարության իրականացման համար բնակելի հասարակական և արտադրական ոլորտի լիցենզիա, այն ինչ հրավերի փաթեթի I-ին մասի 1.1 կետի պետք ապահովի նաև էներգետիկ ոլորտի լիցենզիա
Կոնսորցիումի մասնակցի կողմից ներկայացրած հայտում բացակայում է հրավերով պահանջվող՝ Էներգետիկ ոլորտի լիցենզիան:
- Լիազորագրում մասնակիցների կնիքները և ստորագրությունները անընթեռնելի են

**1.2)** «ՖԱՎՈՐԻՏ-Մ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին

**1.3)** «ԳԵՏ-ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը չի համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին

- Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված N1-ում /գնանշման հարցման ընթացակարգի դիմում-հայտարարություն/ իրական շահառուների կայքհղումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները,

Հիմք ընդունելով վերը նշվածները, ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ մասը և 2024 թվականի հունիսի 18-ին ԳՄԳՀ-ԳՀԱՇՁԲ-24/9 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ձևով մրցույթի հրավերի փաթեթի I-ին մասի 8.9 կետի պահանջները և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և «ԱԼՄԱՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ՊՐՈՄ ՍՏՐՈՅ» ՍՊԸ կոնսորցիումին և «ԳԵՏ-ՇԻՆ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 27/06/2024թ. -ը ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան շտկված փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակիցների կողմից ներկայացված հայտերը հրավերով սահմանված կարգով կգնահատվեն անբավարարար և կմերժվեն:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

**2)** Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հունիսի 28-ին ժամը 11:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:**

| ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ | | |
|---|---|---|
| ՆԱԽԱԳԱՀ՝ | | Գ.ԲՈՇՅԱՆ |
| ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | Ն.ՄՈՒԽՍՅԱՆ |
| | | Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ |
| ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | Ա.ԿԱՏՎԱԼՅԱՆ |
| | | Գ.ԱՂԼԱՄԱՁՅԱՆ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ | | Ս.ՄԵԼՔՈՆՅԱՆ |